

TERT.AM

ԿԱՅՔՈՒՄ ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՆՅՈՒԹԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ

ԿԱՆՈՆՆԵՐ

Ղեկավարվելով «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքով՝ ներկայացնում ենք «Թերթ Էյ Էմ» ՍՊ ընկերությանը (այսուհետ՝ «Իրավատեր») հեղինակային բացառիկ իրավունքով պատկանող նյութերի օգտագործման կանոնները:

Իրավատիրոջը պատկանող նյութեր են համարվում tert.am կայքում (այսուհետ՝ «Կայք») տեղադրված, հրապարակված տեքստերը, հեղինակած և այլ տեքստերի թարգմանությունները, տեսանյութերը, լուսանկարները, գրաֆիկական և այլ պատկերները, տեսալսողական ստեղծագործությունները (այսուհետ յուրաքանչյուրն առանձին կամ միասին՝ «Նյութ»):

Իրավատիրոջը պատկանող ցանկացած Նյութի **վերարտադրությունը, տարածումը, թարգմանումը, վերամշակումը, ցանկացած տեսակի վերափոխումը, հեռարձակումը, հրապարակային ցուցադրումը մալուխով կամ համանման միջոցներով և ցանկացած այլ ձևով օգտագործումը** պետք է իրականացվի հետևյալ կարգով.

Օգտագործողը պարտավորվում է՝

1. Նյութը օգտագործելիս Նյութի վերնագրում նշել Իրավատիրոջ Կայքի անվանումը հետևյալ կերպ՝ «**tert.am**», միաժամանակ՝
2. Նյութը օգտագործելիս, տեքստի առաջին պարբերությունում ներառել հետևյալը.
«ԱՅՍ ՄԱՍԻՆ ՀԱՂՈՐԴՈՒՄ Է TERT.AM-Ը» կամ **«ԱՅՍ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՑՆՈՒՄ Է TERT.AM-Ը»**,

միաժամանակ վերոնշյալ տեքստի «**tert.am**» բառը պետք է պարունակի ուղիղ հղում օգտագործվող Նյութին (hyperlink) և տարբերվի ընդգծված (royal blue) կապույտ գույնով: Սույն կանոնների երկրորդ կետով նախատեսված պահանջի տառատեսակը և տառաչափը պետք է լինի հրապարակվող հիմնական տեքստի հետ նույնական:

3. Անկախ Նյութի օգտագործման ծավալից՝ Նյութերից քաղվածք(ներ) վերարտադրելիս չբացահայտել Նյութի էական մասը:
4. Նյութը օգտագործելիս բացառել Իրավատիրոջ հնարավոր ընթերցողների, դիտողների քանակի և Նյութի օգտագործման ծավալների վրա բացասական ազդեցությունը:
5. Օգտագործվող Նյութում ներառել հետևյալը.

**«ՆՅՈՒԹԻ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐԸ ԸՆԹԵՐՑՈՂԸ ԿԱՐՈՂ Է ԿԱՐԴԱԼ
ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՈՒՄ»,**

միաժամանակ վերոնշյալ տեքստի «**սկզբնաղբյուրում**» բառը պետք է պարունակի ուղիղ հղում օգտագործվող Նյութին (hyperlink) և տարբերվի ընդգծված (royal blue) կապույտ գույնով: Սույն կանոնների հինգերորդ կետով նախատեսված պահանջի տառատեսակը և տառաչափը պետք է լինի հրապարակվող հիմնական տեքստի հետ նույնական:

6. Իրավատիրոջը պատկանող լուսանկար(ներ)ի, գրաֆիկական պատկեր(ներ)ի և այլ տեսավիզուալ նյութերի օգտագործման դեպքում քանակը չպետք է գերազանցի 3-ը (երեք), ընդ որում՝ պահպանելով նյութերի վրա watermark եղանակով տեղադրված (առկա) Իրավատիրոջ տարբերանշան(ներ)-ը (անուն, լոգո և այլ տարբերանշաններ):

7. Նյութը հեռուստատեսությամբ (այդ թվում՝ համացանցային) և/կամ ռադիոյով բանավոր հաղորդելիս՝ յուրաքանչյուր հաղորդման ավարտին, նշել (հայտարարել) Իրավատիրոջ՝ «tert.am»-ի անվանումը՝ իբրև սկզբնաղբյուր:

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Սույն կանոնների որևէ պահանջի խախտմամբ Նյութի օգտագործումը համարվում է Իրավատիրոջ հեղինակային իրավունքի խախտում և հանգեցնում է ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պատասխանատվության:

Սույն կանոններով նախատեսված պայմանների իրավական պաշտպանության միջոցները բխում են ՀՀ Քաղաքացիական օրենսգրքից, «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքից և ոլորտը կարգավորող օրենսդրական և ենթաօրենսդրական այլ իրավական ակտերից:

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Իրավատիրոջն իրավունք է վերապահվում փոփոխել օգտագործման սույն կանոնները առանց որևէ մասնավոր ծանուցման: